

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս.*

Հետխորհրդային պետությունների ներկա համագործակցության բնույթն անհնար է պատկերացնել առանց միգրացիոն գործոնի¹: Չնայած նախկին միութենական հանրապետությունների քաղաքական տարանջամանը՝ նրանց միջև բնակչության փոխանակման գործընթացները ոչ միայն չեն դադարել, այլև նկատելի է միջպետական միգրացիոն տեղաշարժերի աճի միտում: Դա իր հերթին նպաստում է այդ հանրապետությունների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի պահպանմանը և ընդլայնմանը. այս համատեքստում միգրանտներն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում:

Պայմանավորված զուտ տնտեսական գործոններով, առաջին հերթին՝ առանձին երկրների լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների պահանջով և այլ երկրների տնտեսական դժվարություններով՝ միգրացիան դառնում է լուրջ կառուցվածքաստեղծ գործոն: Ներթափանցելով ելքի և մուտքի երկրների կենսագործունեության բազմաթիվ ոլորտներ՝ այն առաջացնում է սոցիալական և էթնոմշակութային բնույթի բազմաթիվ փոխազդեցության երևույթներ: Այստեղ կարևորվում են շարժունակ էթնիկ խմբերը՝ առանձնակի տեղ զբաղեցնելով տեղաշարժերի հետևանքով առաջացող խնդիրներում: Սա պայմանավորված է նրանով, որ հատկապես էթնիկ միգրանտներն են դառնում բնակչության այն առանձնահատուկ խումբը, որը տար-

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, karapetyan.ruben.s@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 21.11.2018, գրախոսման օրը՝ 18.02.2019:

¹ Հոդվածը շարադրված է ՀՀ-ում անցկացված էթնոսոցիոլոգիական նյութերի հիման վրա: Հետազոտությունն անցկացվել է ՀՀ կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «Բելառուսի հայերը Հայաստան-Բելառուս էթնոմշակութային կապերի միգրացիոն համատեքստում՝ էթնիկ ավանդույթներ և ներկա իրավիճակը» հայ-բելառուսական համատեղ նախագծի շրջանակներում:

բեր էթնոսոցիալական միջավայրերի հետ շփման հետևանքով ձևավորում է գիտակցության և վարքի յուրատեսակ կարծրատիպեր:

Նման պարագայում միջպետական միգրացիոն հոսքերի նկատվող աճը ավելի հավանական է դարձնում էթնիկ տարրի ազդեցության ուժեղացումը ներընտանեկան, ներսոցիալական և միջէթնիկ հարաբերություններում ինչպես նոր, այնպես էլ նախկին միջավայրերում:

Լինելով որոշակի էթնիկ խմբի ներկայացուցիչ և միևնույն դեպքում հայտնվելով այլէթնիկ միջավայրի ազդեցության տակ՝ միգրանտը դառնում է սեփական և այլէթնիկ սոցիալական, մշակութային և այլ տարրերի կրողը ու, հաշվի առնելով նրա կապերը նախկին միջավայրի հետ, նաև փոխանցողը: Սրանով էթնիկ միգրանտները նպաստում են այն իրական փոխակերպման գործընթացներին, որոնք տեղի են ունենում նոր և նախկին բնակավայրում: Այս առումով նրանց արժեքային համակարգի խաթարումը, պատկերացումների, կողմնորոշումների առանձնակի դրսևորումները մեծ չափով կախված են մի շարք գործոններից: Առաջին գործոնը նոր շրջապատի էթնոսոցիալ հատկանիշներն են: Երկրորդը այսպես կոչված «ելքային» հատկանիշներն են՝ սոցիալական, ծագումնաբանական, մշակութային և այլն: Երրորդ գործոնը նոր միջավայրի հետ փոխգործողության բնույթն է: Իսկ չորրորդը միգրանտի կապերի բնույթն է նախորդ միջավայրի հետ:

Այսպիսով, կախված տեղաշարժերի ծավալներից, միգրացիոն խմբերն ունակ են ազդելու մուտքի և ելքի երկրների սոցիալական, քաղաքական մթնոլորտի վրա ինչպես այսօր, այնպես էլ հեռանկարում: Այս հանգամանքը հարուցում է քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնք կարևոր են բնակչության նման փոխանակմանը մասնակցող երկրների համար. այդ են վկայում այդ խնդրի շուրջ ընթացող հանրային բուռն քննարկումները: Վերջիններիս առկայությունը հաստատում է մասնակից երկրների համար այդ գործընթացի հետևանքների վերաբերյալ գիտելիքների ստացման և համակարգման կարևոր սոցիալական պատվերի առկայության մասին:

Անդրադառնալով միգրացիայի էթնոսոցիալական հետևանքներին՝ մեծապես արդյունավետ է որպես ուսումնասիրության թիրախ ընտրել նախկին միութենական այն պետությունները, որոնք արդի շրջանում փոխադարձ անմիջական ակտիվ միգրացիոն կապերի մեջ են: Դրանց մի բևեռը միգրացիոն հոսքերի ընդունող երկիրն է, մյուսը՝ այդ հոսքերը սնու-

ցողը: Վերջինս այն երկրների շարքում է, որի աշխատանքային ռեսուրսների նշանակալի մասն իր սահմաններից դուրս է: Այս երկու «բևեռներում», որտեղ ըստ երևույթին ընթանում են էթնոսոցիալ փոխակերպումների գործընթացները, անհրաժեշտ է հետևել դրանց զարգացման միտումներին: Դա հնարավորություն կտա ըմբռնելու արդի փուլում ընթացող բնակչության ներպետական և միջպետական տեղաշարժերի զարգացման օրինաչափությունները և պատկերացնելու հեռանկարը:

Վերը նշվածի համատեքստում առանձին նշանակություն են ստանում Բելառուսի և Հայաստանի միջև եղած միգրացիոն հարաբերությունները, որում առաջինը հանդիսանում է որպես ընդունող երկիր, իսկ երկրորդը՝ սնուցող: Ըստ բնակչության վիճակագրական տվյալների՝ Բելառուսում դիտարկվում է առանձնակի սոցիալական և ծագումնաբանական կազմով բնորոշ հայերի քանակի աճ²:

Երկու ժողովուրդների բազմադարյա հարաբերությունների հենքի վրա և բելառուսների պատմական զարգացման մեջ հայերի կարևոր դերին զուգահեռ՝ արդի պատմական ժամանակահատվածն առանձնանում է նոր գործընթացներով և երևույթներով: Այս խնդրին անդրադարձել են Ա. Երմալովիչը³ և Ն. Ավետյանը⁴: Բելառուսում հայերի քանակի մասին բավական մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ նաև 2009 թ. այնտեղ անցկացված մարդահամարի տվյալներից⁵:

Ըստ նշված հեղինակների՝ պատմական կտրվածքով հայերի՝ Բելառուս տեղափոխման ժամանակագրությունն ընդգրկում է երեք հիմնական շրջան՝ խորհրդային շրջան, անկախության ու Արցախյան պատերազմի առաջին տարիներ և XX դ. դարի վերջին տասնամյակ: Ակնհայտ է, որ նրանք ներկայանում են առանձնահատուկ էթնիկական միատարր, սակայն ծագմամբ բազմատարր կազմով ու սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներով՝ ըստ այդ երկրում հաստատման ժամանակահատվածի: Նշված ժամանակահատվածներին համապատասխան՝ հայ-բելառուսական միգրացիոն կապերը կրում են նաև փուլային բնույթ: Դրանք, դրսևորվելով հիմ-

² Տե՛ս **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь. LAP – Lambert Academic Publishing, 2015, էջ 80:

³ **Ермалович А.** Армяне в Беларуси /А.Ермалович// Несси, 1995, N 5, с. 8-12.

⁴ **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь.

⁵ Национальный статистический комитет Республики Беларусь. Перепись населения 2009 года. Национальный состав населения, Минск, 2009.

նականում միջանձնային հարաբերությունների ոլորտում, դառնում են երկու էթնոսների միջև փոխազդեցության մեխանիզմ, որը ժամանակի ընթացքում ունակ է տարածվելու հասարակական հարաբերությունների տարբեր ասպարեզների վրա:

Ենթադրվում է, որ, ուսումնասիրելով մշակույթով մոտ և դրական վերաբերմունքով* Բելառուսի բնակչության շրջանում հայերի ադապտացիայի սոցիալական և մշակութային կողմերը, կարող ենք որոշել նոր միջավայրում հայ էթնոսի սոցիալական և ծագումով տարբեր խմբերի գոյատևման ընդհանուր և առանձնահատուկ գծերը, և, որ շատ կարևոր է, Հայաստան ներգաղթի հեռանկարները:

Այս առումով Բելառուսի և Հայաստանի միջև ներկայումս ստեղծված միգրացիոն կապերի և նրանց զարգացման ուսումնասիրության խնդիրը կարևոր նշանակություն է ստանում հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների ընդհանուր հիմնախնդրի շրջանակներում: Մյուս կողմից էլ, հետևելով այդ կապերի շարժունակությանը և բացահայտելով դրանց բովանդակությունը, հնարավոր է հասկանալ միգրացիոն գործընթացների էթնոսոցիալ բնույթը և պատկերացնել հեռանկարները:

Միևնույն դեպքում իրար հետ հաղորդակցվող երկու բևեռների (հայրենիք-սփյուռք) անդամները մարդիկ են որոշակի կենսագրությամբ, վարքագծով, պատկերացումներով և արժեքներով: Եվ այս ամենը բավական դինամիկ դաշտում է, քանի որ մենք գործ ունենք մասնատված կառուցվածքների հետ, որոնք պետք է ուրույն դրսևորվեն տարբեր միջավայրերում: Առաջին միջավայրը ելքի միջավայրն է, որի կենսակերպը խաթարված է նրա որոշակի անդամների բացակայության պատճառով: Մյուսը մուտքի միջավայրն է, որտեղ ընթանում են նախորդ միջավայրը լքած անդամների ներխուժումը և հարմարեցումը: Նման պարագայում երկու միջավայրերում առաջանում են նոր տիպի գործընթացներ:

Պարզորոշ է, որ այդ երկու միջավայրերում ընթացող գործընթացների մասնակիցները նշված խնդիրները ուսումնասիրողի համար բավական բովանդակալից տեղեկատվության աղբյուր են: Վերջինս որոշակի է և դրանից օգտվելու համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդաբա-

* Դրա վկայությունն են երկկողմ և բազմակողմ դաշնակցային հարաբերությունները, Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և ԵվրԱզԷՍ-ին:

նություն, որի հիմքում բարեկամական-հարևանական կապերի ցանցում գործառվող տեղեկատվությունն է: Ըստ այդմ՝ արյունակցական կապերը կարող են նպաստել խմբի արյունակից, բարեկամ մյուս անդամների մասին տեղեկատվություն ստանալու, անկախ նրանից, թե ինչ հեռավորության վրա են նրանք:

Ինչպես ցույց տվեց մեր նախորդ փորձը⁶, այս աղբյուրը բավական հավաստի և հուսալի է: Նշված համատեքստում Բելառուսում բնակվող միգրանտներին դիտարկենք որպես սոցիալ-մշակութային առանձնակի տարրերի կրող և փոխանցող և դրա կոնկրետ արտահայտությունների հիմամբ ուսումնասիրենք միջմշակութային փոխազդեցության գործընթացների տրամաբանությունը սոցիալ-ժողովրդագրական կտրվածքով: Այս նպատակով կատարեցինք Հայաստանում բնակվող և Բելառուսի հետ միգրացիոն, հետևաբար էթնոսոցիալ կապեր ունեցող ընտանիքների հետազոտություն՝ պարզելու Բելառուսի հետ միգրացիոն առնչությունների դերը, բելառուսական էթնոմշակութային տարրերի ներթափանցման ուղիները և տրամաբանությունը ՀՀ գյուղական բնակչության շրջանում: Վերջինիս ընտրությունը բացատրվում է հետևյալ երկու նկատառումով: Առաջինը բխում է այն պարզ դատողությունից, որ գյուղական բնակչությունը, մասնավորապես խոշոր քաղաքներից, մասնավորապես Երևանից հեռու բնակավայրերից ավելի ավանդապահ է և ներփակված է իրեն հատուկ մշակութային միջավայրում: Հետևաբար բնակչության այդ զանգվածի հիման վրա ավելի դյուրին է պարզաբանել միջմշակութային ներթափանցման գործընթացը:

Երկրորդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ, լինելով ավելի ավանդապահ, սերտ կապեր է պահպանում հայրենիքից հեռացած իր նախկին հարևանի, համագյուղացու կամ հարազատի, բարեկամի հետ: Այս կապերի ամրության մասին են վկայում նախորդ հետազոտությունների նյութերը: Ըստ այդմ՝ գյուղական բնակչությունը, ի տարբերություն քաղաքայինի, արյունակցական և բարեկամական կապերի մեջ ավելի լայն շառավիղներ է ընդգրկում՝ առավել սերտ առնչվելով հայրենիքից հեռացած անձանց հետ⁷:

⁶ Տե՛ս **Կարապետյան Ռ.Ս.**, Միգրացիան և հայկական նոր սփյուռքը. էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն, Ե., 2013:

⁷ **Կարապետյան Ռ.Ս.**, Միգրացիան և հայկական նոր սփյուռքը..., էջ 5-8:

Երրորդ հանգամանքը կապված է այն նախադրյալի հետ, որ ուսումնասիրման այսպիսի թիրախը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես և ինչ տրամաբանությամբ է ընթանում մշակութային մերձեցումը օտար միջավայրում: Սա շատ կարևոր է այն առումով, որ սփյուռքի ձևավորման գործոնների և բնութագրիչների, մասնավորապես միգրացիայի և սփյուռքի առաջացման փոխկապակցված գործընթացների վերաբերյալ զգալի հակասական դատողություններ կան:

Չորրորդ հանգամանքը. ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները և Բելառուսում անցկացված սոցիոլոգիական հարցումների նյութերը⁸, այնտեղ բնակվող հայերի առանձնակի խումբ են ծագումով Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի գյուղերից գաղթած բնակիչները: Այդ նյութերը, ինչպես նաև հարցազրույցը Ն. Ավետյանի հետ վկայում են, որ Բելառուսը բավական սերտ միգրացիոն կապեր է հաստատել մասնավորապես Սարչապետ, Տաշիր, Մեծավան, Լեռնահովիտ բնակավայրերի բնակչության հետ*: Այսպիսով, առանձնացվել էր մոտ հարյուր ընտանիք, որոնք ունեն հետևյալ կազմը. 24՝ բարդ (եռասերունդ), 19՝ պարզ, երկսերունդ, 13՝ մեկ սերունդ, 4՝ ոչ լրիվ կազմ:

Դրանցից 45-ը Բելառուսում, բացի այլ բարեկամներից, ունեն մտերիմ հարազատներ (ծնող, երեխա, եղբայր, քույր), 40-ը՝ միայն հորեղբայր, հորաքույր, քեռի կամ մորաքույր, իսկ 15-ը՝ հեռու բարեկամ կամ համազրուղացի: Ըստ Հայաստանում բնակվող արյունակիցներից ստացված տեղեկատվության՝ հայերի այդ գանգվածը ցրված է Բելառուսի ողջ տարածքում, որից յուրաքանչյուր չորրորդը՝ գյուղական բնակավայրերում: Ըստ այդմ՝ էմիգրանտ հարազատները բնակվում են այդ երկրի մոտ 34 բնակավայրերում արդեն հինգ տարուց ավելի: Դրանց ճնշող մեծամասնությունը՝ մոտ

⁸ Տե՛ս **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь. LAP Lambert Academic Publishing, 2015, с. 118-132.

* Վերոնշյալը հիմք էր ուսումնասիրության թիրախ ընտրել Տաշիրի տարածաշրջանի այն բնակիչներին, որոնք արյունակցական կապեր ունեն Բելառուսում գտնվող միգրանտների հետ: Այդ նպատակով ուսումնասիրության ընտրանքը կատարվել է երեք փուլով: Առաջին փուլ՝ ընտրվել են այն գյուղերը, որոնցից նկատվել էր ամենաինտենսիվ հոսքը Բելառուս: Դրանք են Տաշիր, Սարչապետ, Լեռնահովիտ և Մեծավան բնակավայրերը: Երկրորդ փուլ՝ երեք գյուղերի ծխամատյաններից դուրս բերվեց յուրաքանչյուր տասներորդ ընտանիքը, իսկ Տաշիրից՝ յուրաքանչյուր տասներորդ բնակիչը՝ ընտրողների ցուցակից: Երրորդ փուլն առանձնացրեց այն ընտանիքները (և անձանց), որոնց արյունակիցները (ընտանիքի անդամները կամ բարեկամները) Բելառուսում են:

80 տոկոսը, Բելառուսում բնակություն է հաստատել ամբողջ ընտանիքով (ամուսին, կին և երեխաներ), յուրաքանչյուր հինգերորդը կա՛մ միայնակ է, կա՛մ ամուսնու/կնոջ հետ: Սա արդեն վկայում է այդ երկրի հետ առանձնակի միգրացիոն կապի մասին, որը, ըստ երևույթին, բացատրվում է երկրի բարենպաստ պայմաններով (տնտեսական և սոցիալական)*:

Նյութերի վերլուծությունը ցույց տվեց, որ Բելառուս տեղափոխված հայերի մեծ մասն ամուսնացած է եղել, կամ, ապրելով այնտեղ, նախընտրել է ամուսնանալ տաշիրցու հետ: Դրա մասին է վկայում ինչպես ասացողների տեղեկատվությունը, այնպես էլ վիճակագրությունը՝ ընդամենը երկուսն են ամուսնացել բելառուսի, իսկ ութը՝ ռուսի հետ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Բելառուսում բնակվող հայերի ճնշող մեծամասնությունը կա՛մ տեղափոխվել է ընտանիքով, կա՛մ, անգամ միայնակ գնալով այդ երկիր, այնուամենայնիվ, նախընտրել է ամուսնանալ հայի հետ: Այն փաստը, որ օտարազգի ամուսնությունների դեպքում ռուսները չորս անգամ ավելի են, քան բելառուսները, վկայում է երկու ուշագրավ երևույթի մասին: Նախ՝ օտար միջավայրում էթնիկ փոքրամասնությունը նախընտրում է սերտանալ մեկ այլ՝ այսպես կոչված տիտղոսակիր ազգի «ճնշման» տակ գտնվող էթնոսի հետ՝ միջավայրին հակազդելու մղումով: Երկրորդը վկայում է էմիգրանտի ավելի հեռահար նպատակների մասին՝ ՌԴ մեկնելու տրամադրությամբ: Այս միտումը թերևս նկատվում է Բելառուսի բոլոր բնակիչների շրջանում, որի խորապատկերի վրա հայերի մեջ դիտարկվող քանակի նվազումը (ըստ մարդահամարների տվյալների՝ նրանց քանակի գագաթնակետը 1999 թվականն էր) տրամաբանական է: Ըստ երևույթին, Բելառուսը հայ միգրանտների որոշակի խմբերի համար դառնում է տառանցիկ երկիր:

Հարցվողների մեծ մասը բավական ստույգ տեղեկություն տվեց նշված տարածաշրջանից Բելառուս տեղափոխված անձանց՝ նոր միջավայրում սոցիալական ձեռքբերումների մասին: Այս առումով պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ծագումով տաշիրցի այս միգրանտները Բելառուսում նախքան վերջնականապես հաստատվելը այնտեղ աշխա-

* Ըստ հարցման ենթարկված 100 ընտանիքներից ստացված տվյալների՝ տեղեկություն ստացվեց Բելառուսում բնակվող մոտ 350-400 անձանց և հետևաբար ընտանիքների մասին:

տանքային միգրանտներ են եղել՝ մեծավ մասամբ զբաղվելով ֆիզիկական աշխատանքով: Այժմ, ըստ տեղեկատվության, նրանց սոցիալական կազմը քիչ է փոխվել: Հայաստանում բնակվող արյունակիցների բանավոր պատմությունները վկայում են այն մասին, որ կանանց կեսից ավելին զբաղված է տնային տնտեսությամբ, մի մասը ծառայում է, մի հատվածն էլ խոհարար է: Տղամարդկանց մեծ մասը զբաղված է շինարարությունում (35%), գյուղատնտեսությունում (30%), տրանսպորտում՝ որպես վարորդ (10%), առևտրում՝ որպես վաճառող (25%): Ինչքանով են այս միգրանտները ամրապնդված Բելառուսում, կարելի է պատկերացնել այնտեղ նրանց սեփականության առկայությամբ: Այս պարագայում պետք է հաշվի առնել նաև Բելառուսի քաղաքական առանձնահատկությունը, որն ավելի մոտ է սոցիալիստականին, քան կապիտալիստականին: Սակայն, միևնույն է, ըստ Հայաստանում հարցվածների՝ Բելառուսում բնակվող իրենց բարեկամների 95 տոկոսը բնակության երկրում չունի սեփականություն, և հակառակը՝ երկու երրորդից ավելին Հայաստանում ունի սեփական տուն, յուրաքանչյուր տասներորդը՝ հողատարածք: Նրանց ճնշող մեծամասնությունը հաճախակի կապ է պահպանում Հայաստանում բնակվող հարազատների հետ սկայպով և վայբերով, իսկ ամեն հինգերորդը հանդիպումներ է կազմակերպում կա՛մ Հայաստանում (95%), կա՛մ Բելառուսում (40%): Այս տեղեկատվությունը վկայում է Բելառուսի հայերի շրջանում որոշ ռեէմիգրացիոն տրամադրությունների առկայության մասին: Նրանց սովոր մասը վերջնականապես չի կտրում կապը հայրենիքի հետ՝ ունի այնտեղ սեփականություն և պահպանում է հարաբերությունները ՀՀ-ում մնացած բարեկամների հետ: Ավելին, Հայաստանում մնացածների կեսը տրամադրված է մնալ հայրենիքում: Իսկ արտագաղթելու տրամադրվածների երկու երրորդը ձգտում է ՌԴ, քսանական տոկոսներն էլ՝ Բելառուս՝ հարազատներին միանալու պատճառաբանությամբ և այլ երկիր տեղափոխվելու: Գաղթելու են տրամադրված մեծահասակներից յուրաքանչյուր չորրորդը (երեխաներին միանալու դրդապատճառով), երիտասարդներից՝ յուրաքանչյուր երրորդը (աշխատանքի և ապագայի խթանով), ամբողջ ընտանիքով՝ յուրաքանչյուր երրորդ ընտանիքը (աշխատանք և ապագա):

Հարցման մեջ ընդգրկված հաջորդ տեղեկատվական հատվածը կոչված էր պարզաբանելու միգրացիոն գործոնը միջմշակութային հարաբերություններում: Պարզորոշ է, որ միգրանտները, լինելով օտարազգի մի-

ջավայրում, լուրջ ազդեցության տակ են՝ ինչպես սոցիալական բնույթի (ակներև էր նրանց սոցիալական հատկանիշների օրինակով), այնպես էլ մշակութային: Հետևաբար, բնակչության տվյալ հատվածը, ադապտացվելով նոր միջավայրին, դառնում է այդ մշակույթի տարրեր կրողը: Բացի դրանից, վերջիններս բարեկամական սոցիալական ցանցի միջոցով հաղորդակից են դարձնում նախորդ բնակավայրի հարազատներին և, շատ հավանական է, ամբողջ միջավայրին:

Միջէթնիկ մշակութային փոխազդեցության տարրերը բացահայտելու և այդ տարրերի գերակշռող և անհետացող մասերը հասկանալու, հետևաբար այդ գործընթացների տրամաբանությունն ընկալելու առումով հատկապես կարևոր է պատկերացում ունենալ մշակութային յուրաքանչյուր տարրի գերակայության աստիճանի ու տեղի մասին: Դիտարկենք նշվածը միջնորդավորված, այսինքն՝ էմիգրանտների՝ Հայաստանում գտնվող արյունակիցների վրա մշակութային ազդեցության չափորոշիչներով: Ըստ հարցվածների կարծիքների՝ միջնորդավորված (էմիգրանտների միջոցով) բելառուսական ազդեցությունն առաջին հերթին վերաբերում է խոհանոցին (հարցվողների մոտ 40 տոկոսը): Ըստ հարցվողների կարծիքի՝ նշվել է բելառուսական խոհանոցի 14 ճաշատեսակ (առաջին՝ կաղամբի, շավելի, ձկան և սնկի ապուրներ, երկրորդ՝ դրանիկ, վարենիկ, բլիներ, կրոկյանիկ, բուլբաշ ճաշատեսակներ): Ըստ հարցվողների՝ մի քանի տիպիկ բելառուսական մթերքից առանձնանում են սալը, կեֆիրը և բերյոզայի հյութը: Նշելով բելառուսական խոհանոցի ճաշատեսակները՝ հարցվողները ոչ միայն ցույց են տալիս իրենց իմացությունը, այլև դրանց մեծ մասի օգտագործումը խոհանոցում:

Ազդեցության երկրորդ կարևոր տարրը, ըստ Բելառուսում բարեկամներ ունեցող հայաստանցիների, ընտանեկան նիստուկացն ու հարաբերություններն են: Հարցվողների 15 տոկոսի կարծիքով, կարևորագույններից են ամուսինների իրավահավասարությունը և մաքրասիրությունը: Սա բավական ուշագրավ ազդանշան է (հիմնականում կանանց կողմից)՝ ընդօրինակելու այդ ազգի ընտանեկան հարաբերությունները: Ըստ հարցվողների՝ հատկապես կարևորվում են նպատակադրումների (կյանքի արժեքների) առանձնահատկությունները, այսպես կոչված «կյանքը վայելելու» ուղղվածությունը, որ բնորոշ են բելառուսներին (10 տոկոս): Դրանք ևս ինչ-

որ չափով արժե ընդօրինակել բելառուսներից: Այս առումով հարցվողների կեսը կա՛մ բացատում է, կա՛մ դժվարանում է պատասխանել այս հարցին:

Օրինաչափ է նաև մշակութային ազդեցության մեկ այլ հատկանիշի՝ լեզվական վարքի, մասնավորապես լեզվի իմացության խնդիրը: Առաջին հերթին պետք է նշել, որ երկու լեզվի (կամ երեք լեզվի) տիրապետողները հարցվածների համարյա 90 տոկոսն են, որից միայն 5-ը գիտակ են բելառուսերենի, 75-ը՝ ռուսերենի, 14-ը՝ այլ լեզվի: Սա ցույց է տալիս մի կողմից այն մասին, որ ուսման ընթացքում չդասավանդվող լեզվի իմացությունը (խոսքը բելառուսերենի մասին է) կախված է անմիջական շփումից: Դա էլ հաստատվեց հարցման ընթացքում: Բելառուսերենի իմացությունը ձեռք էր բերվել անձնական շփումներից այդ երկրում գտնվելու ժամանակ՝ աշխատանքային միգրացիայի ընթացքում: Եվ պատահական չէ, որ բելառուսերենին տիրապետում են նրանք, ովքեր ունեցել են անմիջական և երկարատև շփում: Այստեղ միջնորդավորվածության գործոնը չի աշխատում: Մնացած լեզուները հարցվողը ձեռք է բերել կա՛մ դպրոցում, կա՛մ ընտանիքում ստացած գիտելիքների շնորհիվ: Նաև պարզորոշ է, որ ռուսերենի իմացությունը (մոտ 90 տոկոսը), որը կախված է դպրոցից և ընտանիքից, շփումների հնարավորություն է տալիս Բելառուսում:

Միգրացիայի միջոցով միջնորդավորված միջմշակութային փոխազդեցության հատկանիշներից մեկը այլ մշակութային տարրերի ներթափանցումն է անձի կենսագործունեության հուզական ոլորտ: Կարևորներից է տոնաձիսական համակարգը, որն ունի ինչպես ընտանեկան, այնպես էլ հասարակական և քաղաքական բնույթ⁹: Այն փաստը, որ և՛ բելառուսները, և՛ հայերն ընկղմված էին ընդհանուր խորհրդային տոնաձիսական համակարգի մեջ, ցույց է տալիս, որ այդ տարրերի առկայությունը օրինաչափ է և տրամաբանական: Զարմանալին այն է, որ այդ տոները (մարտի 8, փետրվարի 23, մայիսի 1 և այլն) հարցվողները դիտարկում են որպես բելառուսական: Այսինքն՝ օտարազգի, հատկապես հետխորհրդային ազգերի տոնաձիսական համակարգը դիտարկվում է ինչ-որ չափով օտարամուտ «խորհրդային» տոնաձիսական համալիրի մեջ, որը, հարցվողների կարծիքով, ավելի է պահպանվել այդ երկրում, հետևաբար այդ երկրի մշակույթի առանձնահատկության ցուցանիշ է: Հետևաբար, բելառուսականը դիտարկվում է և՛ խորհրդային, և՛ քրիստոնեական համակարգի մեջ, որոնց կող-

⁹ Տե՛ս Մկրտչյան Ա.Ս., Հայոց տոնաձիսական մշակույթ, Ե., 2016, էջ 7:

քին առկա է նաև կոնկրետ սլավոնականը (Իվան Կուպալա, Մալենիցա և այլն): Նկատվում է նաև ևս մեկ միջնորդավորված ազդեցության տարր, այն է՝ Բելառուսի պետական տոները (անկախության, բերքի, մայրության, քաղաքի օրերը): Ուշագրավ է նաև այն փաստը, որ ժամանակակից նորամույժ տոները, որոնք այլ ճանապարհներով արդեն Հայաստանի բնակչության տոնական մշակույթի մեջ են (Սբ. Վալենտինի օրը, Հելոինը և այլն), նույնպես դիտարկվում են որպես բելառուսական ազդեցության արտահայտություն:

Մշակութային միջնորդավորված ազդեցության այլ ցուցիչներ են տվյալ երկրի արվեստի նմուշներին ծանոթ լինելը, մշակույթի և պետական գործիչներին ճանաչելը: Նախքան դրա վերլուծությունը անհրաժեշտ է նշել արդի Հայաստանում և երևի հետխորհրդային տարածքում բնակչության մշակույթի «սպառման» առումով բավական միատարր և ոչ բազմազան բնույթը: Այսպես, օրինակ, 1980 թ. ՀՀ 13 քաղաքի և 25 գյուղի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների ընթացքում մոտ 6000 հարցվողների պատասխաններում նշվեցին մոտ 201 գրողի, 158 երգահանի, 76 նկարչի, 195 դերասանի անուններ: Մինչդեռ 2007 թ. նույն հարցերի պատասխաններում (հարցվողների նույն քանակի պարագայում) այդ թվերը նվազեցին՝ 12, 7, 5, 20¹⁰: Ակնհայտ է, որ այդ «բազմազանության» կրողները, որոնք ոչ հեռու անցյալում որոշակի սոցիալական շերտ էին, արդեն ՀՀ-ում չէին և, հավանաբար, նախկին այլ հանրապետություններում էին: Այս խորապատկերի վրա բելառուսական մշակույթի որոշ նմուշների և գործիչների անուններ, այն է՝ մոտ տասը երաժշտական խումբ, երաժիշտներ՝ Բելայա Ռուս, Բելովեժսկայա Պուլչա, Դորոգնում և Սեաբրի, Ռիբակ, Կոլդուն և այլն, մեր հարցվողների պատասխանների ցանկում հայտնվեցին:

Այսպիսով, եթե Բելառուսի համար այս երևույթի գիտական իմաստավորումն արդիական է այդ հասարակությունում հայերի ինտեգրման էթնոմշակութային բնույթի որոշարկման առումով, ապա Հայաստանի համար այն կարևորվում է բնակչության զարգացող տեղաշարժերի ուղղվածության և հաճախականության ըմբռնման տեսանկյունից: Ակնհայտ է այս ոլորտում գիտելիքների համակարգման անհրաժեշտությունը, քանի որ առաջացող խնդիրները պահանջում են գիտական իմաստավորում

¹⁰ Տե՛ս **Karapetyan R.S.** Migration in cities of Armenia. Ethnosociological survey, Yerevan, 2013, pp. 165-179:

քաղաքական, ինստիտուցիոնալ, սոցիոմշակութային և տնտեսական բնույթի որոշումների կայացման նպատակով:

Այդ նպատակով առաջադրված խնդիրը և նրա ուսումնասիրության մեթոդաբանությունը ապահովեցին հավաստի տեղեկատվություն Բելառուսում գտնվող հայերի շրջանում ընթացող գործընթացների մասին: Նման պարագայում այս մեթոդը բավական դյուրին է դարձնում ճշգրիտ տեղեկություն ստանալը ոչ միայն այլ երկրում (մասնավորապես Բելառուսում) բնակվող հայերի մասին, այլև նրանց սոցիալական ցանցերի միջոցով տեղեկատվական և դրա հիմքի վրա միջմշակութային առնչությունների քննությունը: Մասնավորապես հնարավոր եղավ հետևելու Հայաստանում միջնորդավորված, միգրանտների սոցիալական ցանցերի միջոցով փոխանցվող օտարազգի մշակութային տարրերի տարածման և յուրացման տրամաբանությանը:

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս.

Ամփոփում

Բելառուսում ապրող միգրանտները հայ-բելառուսական մշակութային հարաբերություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Հայաստանի հարազատների հետ հաստատված սոցիալական կապերի միջոցով նրանք բելառուսական մշակույթի որոշ տարրեր են փոխանցում մեր հանրապետության՝ ազգային առումով միատարր միջավայրին: Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երկրից հեռացած միգրանտների՝ Հայաստանում բնակվող հարազատների միջոցով հայկական միջավայր են փոխանցվել և տարածվել զուտ բելառուսական ճաշատեսակներ, նրանց բաղադրիչները, առօրյա կյանքի և ընտանեկան հարաբերությունների տարրեր, բելառուսական հասարակությանը բնորոշ տոներ և ծեսեր: Այսպիսով, կարելի է պնդել, որ միջմշակութային փոխազդեցությունը, բացի ուղիղ միջանձնային փոխազդեցություններից, կարող է առաջանալ անուղղակիորեն՝ միգրացիայի հետևանքով ստեղծված սոցիալական ցանցերի միջոցով:

Բանալի բառեր՝ միգրացիա, սոցիալական ցանցեր, միջմշակութային կապեր, փոխազդեցություն, հարազատներ, Հայաստան, Բելառուս:

О ОПОСРЕДОВАННЫХ АРМЯНО-БЕЛАРУССКИХ ЭТНОКУЛЬТУРНЫХ СВЯЗЯХ

КАРАПЕТЯН Р.С.

Резюме

Живущие в Беларуси мигранты из Армении занимают особое место в армяно-беларусских культурных взаимосвязях. Посредством сложившихся социальных связей с родственниками в Армении они вносят в мононациональную среду нашей республики определенные элементы белорусской культуры. Мигранты интегрируют в армянскую среду чисто белорусские блюда, их ингредиенты, некоторые элементы быта и семейных отношений и т.д. Тем самым можно утверждать, что межкультурное взаимодействие, помимо непосредственных межличностных взаимосвязей, может происходить опосредованно – через сложившиеся в результате миграций социальные сети.

Ключевые слова – миграция, социальные сети, межкультурные связи, взаимовлияние, родственники, Армения, Беларусь.

ON ARMENIAN-BELARUSIAN ETHNIC-CULTURAL INTERCOURSE

R. KARAPETYAN

Abstract

The migrants living in Belarus play a special role in the Armenian-Belarusian cultural relations. Through social ties with Armenia's relatives, they share some of the Belarusian culture with a homogeneous nation-state.

The actual ethno-sociological study has shown that migrants from the country have been transferred to the Armenian environment through their relatives living in Armenia and have been distributing purely Belarusian dishes, their ingredients, elements of everyday life and family relationships, typical Belarusian holidays and rituals. Thus, it is obvious, that intercultural interaction, in addition to direct interpersonal interactions, may occur indirectly through social networks created as a result of migration.

Key words – migration, social networks, intercultural relations, mutual influence, relatives, Armenia, Belarus.